

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 40/4

13 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Էլդանա» ՍՊԸ 16.09.2015 թ-ի բողոքը 2015 թ-ի սեպտեմբեր ամսվա «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը սահմանված կարգով և ժամկետում ընդունված համարելու վերաբերյալ:

«Էլդանա» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

2015 թ-ի օգոստոսի 31-ին «Էլդանա» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից սեպտեմբեր ամսվա «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը սխալմամբ Կենտրոն ՀՏ ուղարկելու փոխարեն, ուղարկվել է Արաբկիրի ՀՏ:

Նամակը ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային տեսչության համակարգ մուտք է եղել սահմանված ժամկետում:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածի համաձայն.

«1. Եթե դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմին, ապա դիմումն ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին:

2. Եթե դիմումում ներկայացված հարցերից մեկը կամ մի քանիսը ենթակա են վարչական այլ մարմնի իրավասությանը, ապա վարչական մարմինը դիմումն այդ մասով վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին:

Դիմումի՝ իրեն վերաբերող մասով, վարչական մարմնում վարույթ է հարուցվում սույն օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված կարգով:

3. Եթե դիմումով առաջադրված պահանջը չի մտնում ինչպես դա ստացած վարչական մարմնի, այնպես էլ որևէ այլ վարչական մարմնի իրավասության մեջ, ապա վարչական մարմինը դիմումը և դրան կից փաստաթղթերը, դրանք ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, վերադարձնում է դիմողին՝ նշելով պատճառների մասին:

4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում վարչական մարմինն իր մոտ պահում է վերահասցեագրված կամ հետ վերադարձված դիմումի պատճենները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև դրանց կից փաստաթղթերի կամ դրանց մի մասի պատճենները կամ դրանց ցանկը»:

Տվյալ դեպքում Արաբկիրի ՀՏ աշխատակիցները նամակը ընկերությանը վերադարձնելու փոխարեն բարեխղճորեն կատարելով իրենց աշխատանքը, նամակը 179 ելից առ 07.09.2015 թ-ին վերահասցեագրվել է Կենտրոնի ՀՏ:

Նամակը Կենտրոնի ՀՏ հասել է 08.09.2015 թ-ին: Սակայն, Կենտրոն ՀՏ-ն «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը մուտք անելու փոխարեն այն ետ է ուղարկել է ընկերությանը, դրանով իսկ խախտելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հավելված 3-ի 3-րդ կետով նախատեսված նամակի ետ վերադարձնելու ժամանակահատվածը՝ խոչընդոտելով մրջին բիզնեսի զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի. «1. Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

2. Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով»:

Նայն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը 2015 թ-ի օգոստոսի 31-ին (սահմանված ժամկետում) սեպտեմբեր ամսվա «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը ուղարկել է ՀՀ Ֆինանսների նախարարության ենթակայության տակ գտնվող այլ հարկային տեսչություն, այսինքն, բովանդակային առումով իր վրա դրված պարտականությունը ընկերությունը կատարել է, ինչը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի հիման վրա չի կարող առաջացնել որևէ բացասական հետևանք ընկերության համար:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է 2015 թ-ի օգոստոսի 31-ին ուղարկված «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը համարել սահմանված կարգով և ժամկետներում ընդունված և միայն ձևական աահանջների մատնանշմամբ չծանրաբեռնել ընկերությանը պարտականություններով կամ մերժել որևէ իրավունք տրամադրելը:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Էլդանա» ՍՊԸ կողմից 2015 թ-ի օգոստոսի 31-ին ուղարկվել է սեպտեմբեր ամսվա «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը (այսուհետ նաև Հայտարարություն): Սակայն, սխալմամբ այն Կենտրոնի ՀՏ ուղարկվելու փոխարեն, ուղարկվել է Արաբկիրի ՀՏ: Վերջինիս կողմից Հայտարարությունը վերահասցեագրվել է Կենտրոնի ՀՏ: Այսուհետև, Կենտրոնի ՀՏ պետի 11.09.2015 թ-ի թիվ 7028/5 գրությամբ Հայտարարությունը հետ է վերադարձվել ընկերությանը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված N 8-ի 5-րդ կետի համաձայն. «Արտոնագրային վճար վճարողները մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող անձինք՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը որևէ ժամանակահատվածի (օրացուցային տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամիս կամ հաջորդական ամիսների հանրագումար, բայց ոչ ավելի, քան մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը) համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հավելվածի N 1 ձևով սահմանված հայտարարություն»:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված N 3-ի 3-րդ կետի համաձայն. «Հարկ վճարողների կողմից իրենց հաշվառման հարկային մարմնի փոխարեն այլ հարկային մարմին ներկայացված հաշվետվությունները հարկային մարմնի կողմից այդ հաշվետվություններն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան լիազորություններ ունեցող հարկային մարմնի պաշտոնատար անձի

գրությանը վերադարձվում են հարկ վճարողին փոստի միջոցով կամ առձեռն՝ հարկ վճարողի կողմից հաշվետվությունների հետստացման վերաբերյալ ստորագրությամբ»:

Նույն օրենքի N 3-ի 4-րդ կետի համաձայն. «Հաշվետվությունները փոստի միջոցով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում փոստային բաժանմունքի ընդունման օրվա օրացուցային կնիքի արտատիպը»:

Քննարկվող դեպքում Արաբկիրի ՀՏ կողմից խախտվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված N 3-ի 3-րդ կետի պահանջները, այն է՝ Հայտարարությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկ վճարողին վերադարձվելու փոխարեն, այն վերահասցեագրվել է Կենտրոնի ՀՏ: Արդյունքում, Հայտարարությունը սխալ հասցեով ուղարկված լինելու մասին ընկերությունը տեղեկացել է միայն 14.09.2015 թ-ին:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործի վերաբերյալ որոշում կայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ ընկերության կողմից «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված N 8-ի 5-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև տվյալ ամսում գործունեություն իրականացնելը, ներկայացվել է «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը, պարզապես թյուրիմացաբար սխալ են նշվել հասցեատիրոջ տվյալները: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ընկերությունը նախապես՝ մինչև գործունեության սկսելը, վճարել է 2015 թ-ի սեպտեմբեր ամսվա արտոնագրային վճարի գումարը, հիմք՝ 25.08.2015 թ-ի թիվ 95 վճարման հանձնարարականը:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ քննարկվող դեպքում, ըստ էության, կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթները, որի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Այսինքն, կարելի է փաստել, որ քննարկվող դեպքում ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարվել են: Հետևապես, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված N 3-ի 4-րդ կետի դրույթներով, Հայտարարությունը հարկային մարմին անհրաժեշտ է ներկայացված համարել 31.08.2015 թ-ին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Էլդանա» ՍՊԸ 16.09.2015 թ-ի բողոքը՝ 2015 թ-ի սեպտեմբեր ամսվա «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը սահմանված կարգով և ժամկետում ընդունված համարելու վերաբերյալ բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՍՅԱՆ